



A Sempra Energy utility

23 դեկտեմբերի 2015թ.

Նամակ Aliso Canyon բնական գազի արտահոսքից տուժված համայնքին

SoCalGas®-ի բոլոր աշխատակիցների անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ բոլորդ այս օրերին ցուցաբերած ընթանման և համբերության համար: Ես հատկապես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել այն ընտանիքներին, ովքեր որոշել են ժամանակավորապես վերաբնակեցվել՝ իրենց շարունակական համագործակցության համար: Մենք ամբողջ սրտով ներողություն ենք խնդրում և հավաստիացնում ենք, որ աշխատում ենք հնարավորինս արագ և անվտանգ՝ բնական գազի արտահոսքը կանգնեցնելու համար: Հոտի պատճառով առողջական ախտանիշներ ունեցողներին մենք շարունակում ենք առաջարկել տնային լուծումներ, որոնք կօգնեն նվազեցնել տան ներսի հոտը: Մեր ամենամեծ և ամենակարևոր առաջնահերթությունն է արտահոսքի դադարեցումը: Մեր հարյուրավոր աշխատակիցները, մասնագետ-խորհրդատուները և մատակարարները շուրջօրյա աշխատում են խնդրի լուծման վրա:

Գազի արտահոսքի կանգնեցումը բարդ գործընթաց է, որը ներառում է աշխարհում հայտնի տեխնիկական մասնագետներին, նահանգային և տեղական կառավարությունների պաշտոնյաներին և արտակարգ իրավիճակների մասնագետներին: Մենք առաջընթաց ենք արձանագրում օժանդակ հորի հորատման մեջ, և, ըստ ժամանակացույցի, կավարտենք այն փետրվարի կամ մարտի վերջին: Օժանդակ հորը կհանդիպի արտահոսող հորի հետ 8000 ֆուտ խորության վրա, և այս գործընթացը շարունակվում է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր: Դեկտեմբերի 19-ի դրությամբ, մենք հորատել ենք 3300 ֆուտ և գտնվում ենք հորատման հինգ փուլերից երկրորդում: Հենց որ օժանդակ հորը հատվի արտահոսող հորի հետ, մենք պոմպով հեղուկ և ցեմենտ կցնենք հորի հատակին՝ գազի հոսքը դադարեցնելու և այն վերջնական փակելու համար: Կրկին անգամ հավաստիացնում ենք, որ աշխատում ենք հնարավորինս արագ և անվտանգ՝ գործընթացը հաջողությամբ ավարտելու համար:

Ձեր հարմարությունը բարելավելու և առողջական խնդիրները նվազեցնելու համար, մենք տրամադրում ենք հետևյալ ռեսուրսները և աջակցությունը՝

- Այն բնակիչների համար, ովքեր ցանկանում են այս ժամանակահատվածում մնալ իրենց տներում, մենք առաջարկում ենք օդի մաքրման և տունը արտաքին ազդեցություններից պաշտպանման ծառայություններ՝ իրենց տներից հոտը նվազեցնելու և, հետևաբար նաև, վերացնելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել **818-435-7707** համարով կամ էլ նամակ ուղարկել alisocanyon@socalgas.com հասցեով
- Եթե օդի մաքրումը Ձեզ համար ընդունելի չէ, մենք ցանկացողների համար շարունակում ենք տրամադրել ժամանակավոր վերաբնակեցման ծառայություններ: Սա ներառում է հատուկ կարիքներ և ընտանի կենդանիներ ունեցողներին: Խնդրում ենք զանգահարել **404-497-6808** համարով և նշել, որ Դուք SoCalGas-ի հաճախորդ եք և զանգահարում եք Aliso Canyon-ի պահանջի համար: Այս հեռախոսային աջակցության կենտրոնը աշխատում է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր:
- SoCalGas-ի Հանրային ռեսուրսների կենտրոնը (Community Resource Center, CRC) ներկայումս բաց է՝ Porter Ranch-ի բնակիչներին աջակցելու և Aliso Canyon-ի միջադեպի հետ կապված հարցերին պատասխանելու համար: CRC-ն տեղակայված է Porter Ranch-ի Town Center-ում՝ 19731 Rinaldi Street հասցեով: Աշխատանքի ժամերն են՝ առավոտյան 10:00-ից մինչև երեկոյան 8:00-ը՝ երկուշաբթիից մինչև ուրբաթ օրերին և առավոտյան 10:00-ից մինչև երեկոյան 6:00-ը՝ շաբաթ և կիրակի օրերին: CRC-ն բաց կլինի Ծննդյան տոնի և Նոր Տարվա նախօրեին՝ առավոտյան 10:00-ից մինչև երեկոյան 4:00-ը, այն փակ է Ծննդյան տոնի և Նոր Տարվա օրերին:

Բացի դրանից, մենք շարունակում ենք իրականացնել օդի նմուշարումներ համայնքի բազմաթիվ վայրերից: Օդի այս նմուշառման վերաբերյալ պարբերաբար թարմացվող տեղեկությունները կարելի է գտնել alisoupdates.com կայքում: Մենք կշարունակենք տեղեկացված պահել բոլորին իրավիճակի փոփոխությունների մասին: Ընթացիկ թարմ տեղեկությունների համար այցելեք AlisoUpdates.com կայքը: Մենք գնահատում ենք Ձեր համբերությունը, մինչ մենք այս հարցի լուծման վրա աշխատում ենք հնարավորինս արագ և անվտանգ:

Հարգանքներով,

Dennis Arriola
Նախագահ և Գլխավոր գործադիր տնօրեն